# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N2

**31.03.2016թ. կնքված N ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/1-16/05-2 ծածկագրով «Պետության կարիքների համար վառելիքի մատակարարման» պետական գնման պայմանագրի**

ք.Երևան

«29» նոյեմբեր 2016թ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս գործերի կառավարիչ Դ. Բեգլարյանի, որը գործում է ՀՀ կառավարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<ՖԼԵՇ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Յա.Խաչատրյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), հիմք ընդունելով 31.03.2016թ. կնքված N «ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/1-16/05-2» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.4 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Պայմանագրի 4.1 կետում «96250000 (ինսունվեց միլիոն երկու հարյուր հիսուն հազար)» բառերն ու թվերը փոխարինել «80250000 (ութսուն միլիոն երկու հարյուր հիսուն հազար)» բառերով և թվերով:

1.2 Պայմանագրի Հավելված N 1.-ի (տեխնիկական բնութագրի) աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

ՀՀ դրամ

| Հ/հ | Անվանումը | Քանակը /լիտր/ | Տեխնիկական բնութագրերը | Միավորի գինը | Գումարը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Բենզին «Պրեմիում» /կտրոնով/ | 145000 | Արտաքին տեսքը՝ մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 95, շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 85, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը՝ 45-100 կՊա, կապարի պարունակությունը 5 մգ/դմ$^3$-ից ոչ ավելի, բենզոլի ծավալային մասը 1% -ից ոչ ավելի, խտությունը՝ 15 °C ջերմաստիճանում՝ 720-775 կգ/մ$^3$, ծծմբի պարունակությունը 10 մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը 2,7%-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի՝ մեթանոլ-3%, էթանոլ-5%, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10%, եռաբութիլ սպիրտ-7%, եթերներ (C5 և ավելի)-15%, այլ օքսիդիչներ-10%, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի» | 385 | 55825000 |
| 2 | Բենզին «Պրեմիում» /թաքով/ | 25000 | | 385 | 9625000 |
| 3 | Բենզին «Պրեմիում» /կտրոնով/ | 30000 | | 370 | 11100000 |
| 4 | Բենզին «Պրեմիում» /թաքով/ | 10000 | | 370 | 3700000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | | 80250000 |

»:

1.3 Պայմանագրի Հավելված N 2.-ի (գնման ժամանակացույցի) աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

Հազար ՀՀդրամ

| Հ/Հ | Ապրանքի | | | Նախատեսվում է գնել 2016թ. | | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Չ/մ | Միավորի գինը /դրամով/ | I կիսամյակ | | III եռամսյակ | | IV եռամսյակ | | Տարի | |
| | | | | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | Բենզին «Պրեմիում» /կտրոնով/ | լիտր | 385 | 95000 | 36575 | 50000 | 19250 | X | X | 145000 | 55825 |
| 2 | Բենզին «Պրեմիում» /քարտով/ | լիտր | 385 | 15000 | 5775 | 10000 | 3850 | X | X | 25000 | 9625 |
| 3 | Բենզին «Պրեմիում» /կտրոնով/ | լիտր | 370 | X | X | X | X | 30000 | 11100 | 30000 | 11100 |
| 4 | Բենզին «Պրեմիում» /քարտով/ | լիտր | 370 | X | X | X | X | 10000 | 3700 | 10000 | 3700 |
| Ընդամենը | | | | X | 42350 | X | 23100 | X | 14800 | X | 80,250.0 |

»:

1.4 Պայմանագրի Հավելված N 3.-ի (Վճարման ժամանակացույցի) «հոկտեմբեր», «նոյեմբեր», «դեկտեմբեր» և «Ընդամենը տարի» սյունակների «96,250.0» թվերը փոխարինել «80,250.0» թվերով:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի 1-ին կետում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև Պայմանագրի պայմանները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է երկու էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:

**3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

Գ Ն Ո Ր Դ

ՀՀ կառավարության աշխատակազմ ՊԿՀ

ք. Երևան, Կառավարական թ.1 շենք

ՀՀ ՖՆ գործառնական վարչ.

Հ/Հ 900011022085

ՀՎՀՀ 02505554

էլ. հասցեն՝ gnumner@gov.am

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

«Ֆլեշ» ՍՊԸ

ք. Երևան, Եզնիկ Կողբացի 30, հեռ. 534233

«Արարատբանկ» ԲԲԸ

Հ/Հ 15100166690902

ՀՎՀՀ 01808789

էլ. հասցեն՝ flash@flash[illegible]